<<ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ>>
ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ՏՆՕՐԵՆ ________ Ս.Ս. ԿՌԱՔԵԼՅԱՆ
<<18>> ապրիլի 2015թ.

ԿԱՐԳ

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

<18> ապրիլի 2015թ. ք. Իջևան

1. Սույն կարգով սահմանվում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում Անգլերեն լեզվի ուսուցման կենտրոնի ստեղծման, լուծարման և գործառույթների իրականացման հետ կապված հարաբերությունները:
   Կենտրոնի գործունեությունը կարգավորվում է <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին 14.12.2004թ., <<Կրթության մասին>> 14.04.1999թ. ՀՀ օրենքներով, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կանոնադրությամբ և սույն կարգով:
2. Կենտրոնի հիմնական խնդիրներն են
   - Հաստատված ուսումնական ծրագրերով Անգլերեն լեզվի բարձր որակավորում ունեցող դասախոսների միջոցով սկսնակ և ոչ սկսնակ ուսանողների հիմնական կրթական ծրագրերից դուրս ուսուցանում և բարձրագույն կրթություն ունեցող այլ մասնագետների վերապատրաստում,
   - Կենտրոնը իր գործունեությունն իրականացնում է մասնաճյուղի Հումանիտար գիտությունների ֆակուլտետի Օտար լեզուների ամբիոնի կողմից երաշխավորված ուսումնական պլանով,
   - Կենտրոնի դասախոսները նշանակվում և ազատվում են մասնաճյուղի տնօրենի հրամանով՝ կենտրոնի պատասխանատուի երաշխավորությամբ:
3. Կենտրոնի կառուցվածքը և կառավարումը
   - Կենտրոնը ղեկավարում է մասնաճյուղի տնօրենի կողմից հրամանով նշանակված պատասխանատուն,
   - Կենտրոնի անձնակազմի մեջ մտնում են դասախոսները և օժանդակ աշխատակիցները:
4. Կենտրոնի պատասխանատուն
   - Կազմակերպում, ծրագրավորում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է կառույցի ընթացիկ գործավարությունը,
   - Կենտրոնի աշխատակիցներին տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ,

- Կազմակերպում և վերահսկում է կենտրոնում տարվող ֆինանսական և ընդհանուր գործավարությունը,
- Պատասխանատու է կենտրոնի կողմից իրականացվող աշխատանքների որակի, արդյունավետության և նրա առջև դրված խնդիրների պատշաճ լուծման համար,
- Առաջարկություն է ներկայացնում մասնաճյուղի տնօրենի աշխատակիցներին խրախուսելու կամ տույժի ենթարկելու վերաբերյալ:

5. **Ուսման տևողությունը, վճարի չափը և վճարման կարգը**

- Ուսման տևողությունը 3 ամիս է, այն սկսվում է 2015թ. ապրիլի 15-ից, ավարտվում՝ 2015թ. հուլիսի 15-ին,
- Ուսման վճարը ամսական կտրվածքով սահմանվում է 5000 դրամ, որը կանխիկ կարգով մուծվում է մասնաճյուղի դրամարկղ,

  Դասախոսների վարձատրությունը կատարվում է ժամավճարային հիմունքներով՝ վճարներից ստացված գումարի 70 %-ի չափով:

6. **Կենտրոնի ուսանողի պարտականությունները**

- Պարտադիր կերպով հաճախել կազմակերպվող դասընթացներին և կատարել ծրագրով նախատեսված բոլոր առաջադրանքները,
- Պահպանել և կատարել սույն կարգով և մասնաճյուղի ներքին կարգապահական կանոններով պահանջվող բոլոր պայմանները,
- Հոգատարությամբ վերաբերվել հաստատության գույքին,
- Լինել կարգապահ և ուսումնական և այլ կառույցներում պահպանել մաքրություն,
- Սահմանված ժամկետներում մուծել ուսման վարձը:

7. **Կենտրոնի ուսանողի իրավունքները**

- Օգտվել մասնաճյուղի գրադարանից և համակարգչային սրահների հնարավորություններից,
- Սահմանված կարգով բողոքարկել կենտրոնի պատասխանատուի և դասախոսների ոչ կանոնադրական պահանջների կապակցությամբ,
- Սահմանված ժամկետից շուտ հրաժարվել պարապմունքներից:

8. **Կենտրոնի դասախոսների խնդիրներն են**

- Ուսուցանվող առարկայի և համապատասխան թեմաների վերաբերյալ ունենալ մասնագիտական բավարար գիտելիքներ,
- Պարբերաբար զարգացնել և ընդլայնել դասավանդման հմտություններն ու ժամանակակից ձևերը,
- Ուսանողներին ապահովել ծրագրով նախատեսված ռեսուրսներով և թեմաներով,
- Պատասխանատու լինել մատուցած նյութի որակի և դրա ապահովման համար:

9. Դասախոսն իրավունք ունի

- Ունենալ կազմակերպական և նյութատեխնիկական պայմաններ մասնագիտական գործունեության իրականացման համար,
- Մասնակցել կենտրոնի գործունեության վերաբերյալ հարցերի քննարկմանն ու լուծմանը,
- Օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանել իր իրավունքներն ու շահերը,
- Ժամանակին և ամբողջ ծավալով ստանալ կենտրոնում կատարած դասախոսական աշխատանքների դիմաց վարձատրություն:

10. Ուսումնական գործընթացի մեթոդական ապահովումը, որն իր մեջ ներառում է՝

- Ուսումնական պլանով նախատեսված ծրագրեր,
- Ինքնուրույն աշխատանքների կազմակերպման համար մեթոդական ցուցումներ,
- Ամփոփիչ ստուգումների հարցաշարեր,
- Կենտրոնի կողմից մշակված տեսալսողական նյութեր: